emergency contraception

Հրատապ հակաբեղմնավորմանը վերաբերող կարեւորագույն փաստերը

Հրատապ հակաբեղմնավորումը (ՀՀ) սեռական հարաբերությունից հետո հղիությունը կանխարգելու ապահով եւ արդյունավետ միջոց է:

Խորհուրդ է տրվում հրատապ հակաբեղմնավորում կատարել այն դեպքերում, երբ.

- Դուք սեռական հարաբերության ընթացքում չեք օգտվել հակաբեղմնավորիչ միջոցներից կամ
- Դուք կարծում եք, որ Ձեր կիրառած հակաբեղմնավորիչ միջոցներն արդյունավետ չեն եղել:

Ի՞նչ են իրենցից ներկայացնում Հրատապ հակաբեղմնավորման հաբերը:

Հրատապ հակաբեղմնավորման հաբերը պարունակում են այն նույն դեղամիջոցները, որոնք առկա են սովորական հակաբեղմնավորիչ հաբերում եւ օգնում են հղիության կանխարգելմանը: Գոյություն ունեն Հրատապ հակաբեղմնավորման հաբերի երկու հիմնական տեսակներ.

- Պլան B™ միայն պրոգեստին պարունակող հաբեր.
- Սովորական հակաբեղմնավորիչ հաբերի բարձր դոզաներ.

Մի վարանեք: Հնարավորին չափ շտապ ընդունեք Հրատապ հակաբեղմնավորման հաբերը:

- Լավագույն արդյունքին հասնելու համար խորհուրդ է տրվում գործածել ՀՀ հաբերը անպաշտպան սեռական հարաբերությունից հետո երեք օրվա ընթացքում:
- Որքան շուտ ընդունեք ՀՀ հաբերը, այնքան ավելի արդյունավետ կլինեն նրանք:
- Լրացուցիչ տեղեկություններ ստանալու նպատակով զրուցեք Ձեր դեղագործի կամ բժշկի հետ:

ՀՀ հաբերն ապահով են եւ արդյունավետ:

- Միայն պրոգեստին պարունակող հաբերը հղիանալու վտանգը նվազեցնում են 89 տոկոսով:*
- Համատեղ էստրոգեն եւ պրոգեստին պարունակող հաբերը հղիանալու վտանգը նվազեցնում են 75 տոկոսով:*
- Կանոնավոր, երկարատեւ կիրառության համար հակաբեղմնավորիչ այլ մեթոդները ՀՀ հաբերից ավելի արդյունավետ են:
- Հրատապ հակաբեղմնավորման հաբերը չեն պաշտպանում սեռական ճանապարհով փոխանցվող վարակներից, որոնց թվին են պատկանում նաեւ Մարդկային իմունոդեֆիցիտի վիրուսը կամ Ձեռք բերովի իմունոդեֆիցիտի սինդրոմը:

* Հղիանալու վտանգի նվազեցումը հիմնված է մեկ անգամվա գործածման վրա:

ՀՀ հաբերն արդյունավետ չեն առաջացնի:

- Հրատապ հակաբեղմնավորիչ հաբերը տարբերվում են արդյունավետ հաբերից (RU-486).
- Հրատապ հակաբեղմնավորման հաբերն արդյունավետ չեն հղիանալուց հետո եւ չեն կարող հղիությունն ընդհատել:

ՀՀ հաբերը զարգացող պտղին չեն վնասի:

- Հղիության ընթացքում Հրատապ հակաբեղմնավորման հաբերը վնաս չեն հասցնի զարգացող պտղին, եթե հղիության ընթացքում դրանք սխալմամբ ընդունվեն:
- Հրատապ հակաբեղմնավորման հաբերի ընդունումը չի ազդում ապագայում հղիանալու կնոջ ունակության վրա:

Կանայք կարող են տանը պահել այս հաբերը անհետաձգելի իրադարձությունների համար:

- Բազմաթիվ կանայք գտնում են, որ հարմարավետ է տանը պատրաստ ունենալ Հրատապ հակաբեղմնավորման հաբերը չկանխատեսված անհապաղ իրավիճակների համար:
- Բուժաշխատողները եւ դեղագործները կարող են Ձեզ նախապես Հրատապ հակաբեղմնավորման հաբեր տալ նախքան դրանց կարիքի ի հայտ գալը:

Բժշկական վերահսկողությունը Հրատապ հակաբեղմնավորման հաբերի օգտագործումից հետո

- Երեք շաբաթվա ընթացքում նորմալ դաշտան չունենալու դեպքում կատարեք հղիության ստուգման քննություն:
- Շատ կարեւոր է այցելել Ձեր բժշկին կամ կլինիկան, եթե Դուք սովորական հակաբեղմնավորման մեթոդների կարիք ունեք կամ ցանկանում եք տեղեկություններ ստանալ սեռական ճանապարհով փոխանցվող այնպիսի վարակների վերաբերյալ, ինչպիսիք են Մարդկային իմունոդեֆիցիտի վիրուսը կամ Ձեռք բերովի իմունոդեֆիցիտի սինդրոմը:

Կալիֆորնիայում համապատասխան եկամուտ ունեցող բոլոր կանայք եւ տղամարդիկ կարող են ստանալ ընտանիքի պլանավորման անվճար ծառայություններ Ընտանիքի պլանավորման եւ բուժման հարցերով զբաղվող ծրագրի միջոցով (Family PACT): Եթե Դուք չունեք բժիշկ կամ կցված թեք որեւէ կլինիկայի, զանգահարեք 1-800-942-1054 Ձեզ համար Ընտանեկան Պլանավորման եւ բուժման հարցերով զբաղվող մասնագետ գտնելու համար (Family PACT).

Approved by the California State Board of Pharmacy
Revised March 2005 • Formatted by Pharmacy Access Partnership